ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

23 ապրիլի 2026թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն մասնակի միակողմանի լուծելու մասին

ՌՈՒԶ-ՄԱՐՏԻ ՍՊԸ-ի տնօրեն
Ռուզաննա Մարտիրոսյանին

Հարգելի տիկին Մարտիրոսյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և ՌՈՒԶ-ՄԱՐՏԻ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026թ.-ի հունվարի 19-ին և մարտի 30-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել **ԱՔ-ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-2** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: 20.04.2026թ. Ձեր կողմից ներկայացված գրության համաձայն հրաժարվել եք Պայմանագրի 9-րդ չափաբաժնի (Կարտոֆիլ) հետագա մատակարարումից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2026թ.-ի ապրիլի 27-ից Պայմանագիրը նշված չափաբաժնի չմատակարարված մասով մասնակի միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **554841,5 (հինգ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր քառասունմեկ ամբողջ հինգ տասնորդական)** ՀՀ դրամի և **432557,3 (չորս հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր հիսունյոթ ամբողջ երեք տասնորդական)** ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201183)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ՌՈՒԶ-ՄԱՐՏԻ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**